

## ԿԻՒՐԵՂԵԱՆ ՔՈՅՐԵՐՈՒ ԿՏԱԿԸ ՍԻՏՆԻԷՆ

Տնօրէն ժողովի 15 Յունիս 2006 նիստին մէջ, Պատրիարք Սրբազանը հաղորդեց.-

«Յունիս 2, 2006ին, Սիտնիէն (Աւստրալիա) Պր. Գէորգ Պօղոսեան, իբրեւ կտակակատարը Սուլթան եւ Կատարինէ Քօրէյա (Կիւրեղեան) ֆոյրերու, անձնապէս երուսաղէմ գալով, Պատրիարքարանի Հաշուապահութեան յանձնեց դրամատան փոխգիր մը \$528,678.39/100 (Հինգ Հարիւր Քսանութը Հազար, Վեց Հարիւր Եօթանասուն Ութը եւ 39/100 Ամերիկեան Տոլար) գումարով, որ գինն է անոնց ըստ կտակին ծախուած տունին:

Սոյն գումարը արձանագրուած է իբր Կիւրեղեան Հիմնադրամ, գործածուելու համար Պարտիզաթաղի շէնքին մէջ կառուցուելիք յաւելեալ բնակարաններու համար»:

Տնօրէն ժողովը գնահատանքով ընդունեց նուիրատուութիւնը, եւ որոշեց տարին մէկ անգամ Հոգեհանգստեան պաշտօն կատարել Մեծ Պահոց Գ. Կիրակիին նախորդող Շաբաթ օրը, Սրբոյն Կիւրղի երուսաղիմայ Հայրապետի տօնին, Կիւրեղեան գերդաստանի ննջեցեալներու հոգիներուն համար:

### ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Եւ ստորագրեալս, Գէորգ Պօղոսեան իբրեւ կտակակատարը Սուլթան (Սուզի) եւ Կատարինէ (Գաթրին) Կիւրեղեան ֆոյրերու, որոնք Սիտնի Աւստրալիոյ իրենց բնակարան կալուածը կտակեցին երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Պատրիարքութեան, կը գրեմ կենսագրական այս տեղեկութիւնները, խնդրանքին համաձայն երուսաղէմի

Ամեն. Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի:

Եւ երուսաղէմէն Սիտնի փոխադրուած եմ 1969ին եւ գործօն աշխատանքներս տարած եկեղեցւոյ կեանքին մէջ:

1978ին ծանօթացած եմ Սուզի եւ Գաթրին ֆոյրերուն: Վերջինս չէր մկրտուած: Իրենց ծնողները Կարապետ Կիւրեղեան (Կեսարացի), իսկ մայրերին Մարի Գալէմգէրեան (Այնթապցի) ուխտ ըրած են մկրտել երուսաղէմ: Դժբախտաբար փաղափական եւ այլ պատճառներով, առիթ չեն ունեցած երուսաղէմ երթալու:

Այդ օրերուն երուսաղէմի Միաբան Հոգ. Տ. Աղան Մ. Վրդ. Պալիօզեան եւ ես խօսեցանք, եւ Գաթրինը համոզուեցաւ մկրտուելու, եւ ես եղայ կնիքահայր:

Սուզին ծնած է 20 Նոյեմբեր 1926ին Հալէպ: Իսկ Գաթրինը 1 Մարտ 1928ին նոյնպէս Հալէպ: Իրենց մանկութեան տարիներուն ծնողքը կը փոխադրուին Եգիպտոս: Կարապետ Կիւրեղեան եղած է վարպետ կղպանագործ:

Զաւակները, Սուզին եւ Գաթրինը կը յանախեն եւ իրենց ուսումը կը ստանան ֆրանսական կրթութեամբ: Իրենց երիտասարդ տարիքին, 1953ին, կը կորսնցնեն իրենց հայրը: Իսկ չորս տարի ետք կը կորսնցնեն իրենց մայրը:

Եղած են բարեպաշտ եւ հաւատացեալ ընտանիք մը, մինչեւ իրենց կեանքին վերջը պահելով ծնողաց յիշատակները եւ աւանդութիւնները:

Եգիպտոսի յեղափոխութեան շրջանին իրենք իրենց անապահով

զգալով կ'որոշեն եւ կը մեկնին Պարսկաստան:

Սուզին կ'աշխատի որպէս մարդատար ինքնաթիռի սպասարկուհի (*Hostess*) Պարսկաստան-Լոնտոն: Իսկ Գաթրինը կ'աշխատի հաշուապահութեամբ: Տիրապետած էին Ֆրանսերէն, Անգլերէն, Արաբերէն, Հայերէն եւ Պարսկերէն լեզուներու:

1973ին կը փոխադրուին Սիտնի Աւստրալիա եւ կը տեղաւորուին *North Sydney* շրջանին մէջ:

Առանց մէկու մը օգնութեան, տարիներու ընթացքին կ'աշխատին, եւ 1980ական թուականներուն կ'ապահովեն իրենց սեփական բնակարանը Սիտնի *Northbridge* շրջանին, միշտ յանախելով եկեղեցիի արարողութեանց, ինչպէս նաեւ եկեղեցւոյ աղօթասաց ֆոյրերու հաւաքոյթներուն եւ աշխատանքներուն:

11 Օգոստոս 2003ին, Գաթրինը հեռախօսեց խորհուրդ առնելու իրենց կտակի կապակցութեամբ:

Որպէս երկար տարիներ Սիտնիի եկեղեցւոյ վարչական անդամ, ես իմ խորհուրդս առաջարկեցի: Առանց տատամսելու մերժեց: Նոյնպէս երկրորդ խորհուրդս:

Մտահոգուեցայ տեղեակ ըլլալով օտար կազմակերպութիւններուն իրենց կողմէ կատարուած նուիրատուութիւններուն:

Յիշելով որ ինք ուզած էր երուսաղէմ մկրտուիլ, թելադրեցի երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան անունին արձանագրել:

15 Օգոստոս 2003ին յայտնեցին

իրենց որոշումը երուսաղէմի Պատրիարքութեան անունին կտակելու: Իրենց գիտակցութեամբ երուսաղէմ գտնուող իմ եղբօրս, Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի միջոցաւ, լուրը հաղորդեցին Պատրիարք Սրբազան Հօր, եւ Կիւրեղեան ֆոյրերու բնակարանէն անոնք անձնապէս հեռախօսեցին եւ յայտնեցին իրենց որոշումը: Պատրիարք Սրբազանը իր օրհնութիւնները տալով, թելադրեց գործողութիւնները կատարել փաստաբանի միջոցաւ օրինաւոր կերպով եւ Պետական օրէնքի պայմաններուն համաձայն:

18 Օգոստոս 2003ին, Կիւրեղեան ֆոյրերը առանձնապէս տեսակցութիւն ունեցան փաստաբանին հետ, եւ իրենց կամով հաստատեցին իրենց կտակը, ինծի ալ կտակակատար (*Executor*) նշանակելով:

Փաստաբանը ինծի յայտնեց առնուած որոշումը, նոյն ատեն յիշեցնելով թէ կտակակատարները օրէնքին համաձայն որեւէ ատեն կրնան փոխել իրենց կտակը: Հետեւաբար կը յանձնարարուի չը հրապարակել:

Երկու ֆոյրերուն առողջական վիճակը խնամքի կարօտ էր: Սուզին գրեթէ երկու ամիսներ վերջ իր մահկանացուն կնքեց 20 Հոկտեմբեր 2003ին: Իսկ Գաթրինի վիճակը հետզհետէ վատթարացաւ 2005 Փետրուար ամիսէն սկսեալ, մինչեւ իր մահկանացուն կնքեց 21 Սեպտեմբեր 2005ին: Խունկ եւ աղօթք իրենց անմոռաց յիշատակին:

ԳԷՈՐԳ ՊՕՂՈՍԵԱՆ  
ՄԻՏՆԻ




(Զախէն Աջ) Սուլբան եւ Կարինէ  
Կիրեղեան քոյրեր.

Յիշեա՛ Տէր, ողորմութեամբ քով զհոգիս  
Հանգուցեալ Կարապետ, Մարի, Սուլթան եւ  
Կարինէ Կիրեղեան ծառայից քոց եւ համայն  
ննջեցելոցն Կիրեղեան Տոհմին, եւ հանգո՛ւ ի  
լոյս երեսաց Աստուածութեան քոյ միջնոր-  
դութեամբ կենարար մարմնոյ եւ արեան  
Միաճնի քոյ, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-  
սի:



Մշտ նջենաւոր յիշատակարանս եղաւ ի Ս. Յակովբ յաւուրս  
Պատրիարքութեան Տ. Տ. Թորգոմ Ս. Արք. Եպիսկոպոսի Մանուկ-  
եան, ի 23 Սեպտեմբերի 2006 ամի:



Կոյրարէլ պաշտօնն եւ պարտաբաժ մեանձամ ի դարաւոր  
Յաւար Եպիսկոպոս Արքեպիսկոպոսի Մրտաւաղ իմայ Հայրապետին:

